

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳԱՆԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՎ  
ՄԵԱՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

«Մենք կարող ենք ակնհայտ ցույց տալ առաքյալների և մարգարեների ուսմունքների գորությունը, քանզի բովանդակ արևի տակ լիուլի հնչում են նրանց խոսքերը:

Եվ եբրայերեն լեզուն էլ թարգմանվել է ոչ միայն հունարեն, այլև հռոմայերեն, դատիերեն, պարսկերեն, հինդի, հայերեն, սկյութերեն և սավրոմատերեն, կամ կարճ ասած՝ բոլոր լեզուներով, որոնցով շարունակում են խոսել բոլոր ազգերը»:

Թեոդորիտոս եպիսկոպոս Կյուրացի (V դար)

*V դարի սկզբին Վռամշապուհ արքայի հրամանով և սուրբ Սահակ կաթողիկոսի հավանությունով Մեսրոպ Մաշտոց վարդապետը իր աշակերտների հետ գնաց Միջագետք (ըսա Կորյունի՝ Արամի կողմերը)՝ գանիելյան նշանագրերի պակասող մասը դստնելու հույսով: Բայց ասորի Դանիել եպիսկոպոսի մոտ ավելին չգտնելով, ասլա և՛ ասորի, և՛ հույն գրչության ճարտարներից օգնություն չստանալով, նա ապավինեց աղոթքի, ինչպես նշում են վարժագիրները, և աստվածատուր շնորհով ստեղծեց հայերեն լեզվի նշանագրերը: Սակայն Մաշտոցի առաքելությունը Միջագետքում և Ասորիքում չէր ավարտվում միայն հայոց գրերի գյուտով:*

*Հայաստանում քրիստոնեության տարածման հենց սկզբից անհրաժեշտաբար դրվում և սրվում էր հայոց լեզվի ճանաչման խնդիրը՝ որպես «աստվածաշնչյան լեզվի», ի գուղակչիւ հույն, ասորի և լատին լեզուների: Այդ լեզվական սլաքարը փայլուն բացահայտված է Աղաթանգեղոսի Պատմության և Հատկապես ս. Գրիգորի Վարդապետության մեջ: Ինչպես ցույց է տալիս Վարդապետությունը, հայ եկեղեցու առաջնորդները հանձարեղ կերպով օգտագործեցին Պենտեկոստեի հրաշքը (երբ սուրբ Հոգին կրակի բաժանված լեզուների ձևով իջավ Երուսաղեմի վերնատանը ժողովված առաքյալների վրա, և նրանք սկսեցին խոսել այլ լեզուներով), որպեսզի հիմնավորեն հայերեն լեզվով և հայ գրով Աստվածաշունչ քարոզելու իրավունքը: Չավագանյ կարևորելով մայրենի լեզվի դերը քրիստոնեական հավատի տարածման գործում՝ նրանք խիզախություն ունեցան, ժամանակի հրամայականին հետևելով, նորովի մեկնելու նույնիսկ Հիսուսի հայանի պատվիրանը, որ տվեց առաքյալներին համբարձումից առաջ՝ «Ելէ՛ք ընդ ամենայն աշխարհս եւ աշակերտեցէ՛ք զամենայն լեզուս»<sup>1</sup>: Ոչ*

1 Աղաթանգեղայ Պատմություն Հայոց (այսուհետև՝ Ագաթ.), աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց. Տիգրիս, 1909, §661: §508-ում «արբոյց բազում

Թե «զամենայն հեթանոս» կամ «զամենայն ազգս», ինչպես Մաաթեոսի Ավետարանում է ասված (ԻԸ, 19), այլ «զամենայն լեզուս», — սրանով հիմնական սկզբունք էր հռչակվում՝ ուսուցանել ոչ միայն բոլոր ազգերին, այլև բոլոր ազգերի լեզուներով: Շարունակելով Պենտեկոստեի ոգով, Վարդապետությունը շեշտում է ազգային լեզուներով քարոզելու պահանջը. «Այլ զի զհնգույն սրբոյ առին (առաքեալքն) զզօրութիւն՝ եւ զամենայն զագագացն, լեզուացն բաժանելոց, ընկալան զգիտութիւն, զի ամենայն աշխարհաց որ ընդ ամենայն տիեզերս մարդիկ իցեն՝ բաւական լիցին ուսուցանել զհրամանս Աստուածութեան...» (Ագաթ. §663), «(Առաքեալքն) խօսեցան յանկարծակի զամենայն լեզուս», «ելին ընդ տիեզերս, զի տացեն զգիտութիւն սքանչելեաց Աստուածութեան բազմազգեան լեզուացն» (Ագաթ. §672, 674):

301 Թ. ի վեր, Գրիգոր Լուսավորիչը և նրա հաջորդները մի ամբողջ դար ստիպված էին բավարարվել Հայաստանում միայն քրիստոնեություն բանավոր քարոզով: Ընդ որում բանավոր ասելով պետք է հասկանալ ոչ միայն բերանացի, հիշողությունը քարոզելը, այլև ինչպես ճիշտ նկատել է ակադ. Գ. Սարգսյանը, օտարալեզու օրինակելի և կանոնական բնագրերի հետերոէպիկ կամ այլալեզու ընթերցումը, երբ քրիստոնյա քարոզիչը բերանացի թարգմանում էր ձեռքի տակ եղած օտար բնագիրը<sup>2</sup>: Եբրայերենի արգելման պատճառով Պաղեստինի և հրեական սիյուսքի համայնքներում հրեաները հարկադրված էին եբրայական (Հին) կտակարանը բանավոր թարգմանել արամեերեն: Այգ բանավոր ընթերցումը, ինչպես և հետագայում (մ.թ. II դ.) երևան եկած գրա գրավոր տեքստը կոչվում էր թարգում, որ արամեերեն նշանակում է «թարգմանություն»: Այստեղից էլ առաջ է ելել հայերեն թարգմանել բայը՝ թարգում անել կամ թարգումի նման կարգալ: Նույն կերպ էլ հայ քարոզիչները հույն և ասորի կանոնական բնագրերը եկեղեցական քարոզի ժամանակ միանգամից կարդում էին հայերեն: Գրիգոր Լուսավորիչը Հայաստանում հիմնեց ասորի և հելլեն դպրոցներ՝ հենց այլալեզու ընթերցման մեջ հմուտ թարգմանիչներ պատրաստելու համար: Այս կապակցությամբ չափազանց հետաքրքիր է Մովսես Խորենացու վկայությունը: Գանգատվելով հայերեն և հունարեն պատմական հին աղբյուրների բացակայությունից՝ Պատմահայրը նշում է. «նա եւ ոչ մատենագրութիւնք Դիողորի հուպ առ մեզ են, զի ի նմա պահելով զակն՝ անմոռաց անցանէաք ընդ բնան»<sup>3</sup> (ոչ նույնիսկ Դիողորի մատյանները մեր ձեռքի տակ են, որ աչքերս վրան պահելով՝ բոլորն անմոռաց շարադրեինք): Ահավասիկ հետերոէպիկ ընթերցման մասին ժամանակակից հայ պատմագրի ուղղակի վկայությունը, որ կասկած չի թողնում, թե հայերիս մեջ էլ ընթերցման այդ հմտությունն ընդունված էր: Հայոց գրի բացակայությունն պայմաններում սովորում էին այնքան վարժ թարգմանել, որ,

լեզուացն զբաժակն հատուցման մեղացն» խոսքը, որ քաղված է Երեմիայի մարգարեությունից (ԻԵ. 15), «արբուսցես զդա (զբաժակ գինւոյ — Ա. Մ.) ամենայն ազգաց», նույնպես հաստատում է Վարդապետության հեղինակի ձգտումը՝ շեշտելու ազգային լեզվի գաղափարը:

2 Г. Х. Саркисян. К предыстории армянской письменности. — Кавказ и Византия, Ереван, вып. 2, 1980, с. 19—20.

3 Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խորենացի), աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, Գ, Ա, էջ 257:

ինչպես խորենացին է ասում, աչքը պահած գրքի վրա, օտար բնադիրը միանգամից կարդում էին Հայերեն: Լեզվական այդ շփումներով պետք է բացատրել, որ դեռ գրերի գյուտից առաջ Հայոց լեզուն, հիմնականում իր բառազանձի և քերականական միջոցների հաշվին, հասել էր գրական մշակման և հղկման բացառիկ բարձր աստիճանի, որի շնորհիվ Հայ նոր դպրութայն առաջին իսկ երկերի լեզուն զարմանք է հարուցում ոճերի պերճությամբ ու կատարելությամբ: Եվ դա խոստովանում են Հատկապես սուրբ Գրքի այլալեզու թարգմանություններին հմուտ օտար բնագրագետները:

Քրիստոնեությունը Հայերեն քարոզելու, հույն և ասորի քարոզիչ միսիոներների ազդեցությունը նվազեցնելու նպատակով Գրիգոր Լուսավորիչը կարողացավ հմտորեն օգտագործել Հայ քրմական ազդեցիկ տների հեղինակությունը, և նրանց որդիներին ասորի և հելլեն դպրութայն կարգելով և ապա իր ձեռքի տակ սնուցելով ձեռնադրեց եպիսկոպոսներ (Ագաթ. § 840, 845):

Այդ պայքարը ավելի ևս սրվեց Հայ գրերի գյուտի շրջանում: Հայերեն նշանագրերն աստվածային աջով վեմի վրա դժագրելու հրաշապատում տեսիլքը, որ երևաց Մեսրոպին<sup>4</sup>, կարևոր դեր խաղաց ասորի և հույն եկեղեցիների ընդդիմությունը հաղթահարելու համար: Այժմ արդեն Հայ եկեղեցին հետամուտ էր Հայոց նորաստեղծ դպրությամբ ամենից առաջ հոգալու Աստվածաշնչի Հայերեն թարգմանության խնդիրը: Եվ ահա, բացահայտվում է Ասորոց Միջադեպում Մաշտոցի հետապնդած երկրորդ նպատակը: Կորյունը հաղորդում է, թե եղեսիայում Հայերեն նշանագրերը ստեղծելով, Մաշտոցն իր օգնականների հետ իջավ Սամոսատ և այստեղ, Հոուփանոս գրչի հետ տառերը հարգարելուց հետո, ձեռնարկեց թարգմանության իր երկու աշակերտների հետ և սկիզբ դրեց Սուրբ Գիրքը թարգմանելուն՝ նախ Սողոմոնի Առականից. «Եւ եգեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս՝ նախ յԱռականն Սողոմոնի»<sup>5</sup>: Բայց սրա հետ միասին խորենացին ունի շատ կարևոր հավելում՝ «եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռականն, բովանդակելով զքսան եւ երկու յայտնիսն, եւ զնոր Կտակս յեղու ի Հայ բան»<sup>6</sup>: Սուտ-Կորյունը, ինչպես այլ գեպքերում, այստեղ ևս հետևում է խորենացուն<sup>7</sup>:

Ակադ. Ծո. Մալխասյանը Մ. խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանության 187-րդ ծանոթագրության մեջ այս առթիվ լուրջ առարկություն է անում՝ «այսպես բան չէր կարող լինել, որ Մեսրո-

4 Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, Գ, ԾԳ, էջ 327: Թվում է, թե եղիշեն նույնպես ծանոթ է Մեսրոպին երևացած այս տեսիլքին, որ ավանգում է մեզ պատմահայրը, քանի որ նրա խոսքում միանգամայն նույնանում են Աստծո ձեռքով վեմին փորագրված մեր դպրությունը և Մովսեսին Աստծո տված օրենքի քարե տախտակները. «ձեռք, որ գերկինս ե գերկիր Հաստատեցին, նույն եւ տախտակս քարեղէնս փորագրեցին եւ ետուն մեզ դպրութիւն, որ ունի զօրէնս խաղաղականս եւ փրկականս»:

5 Կ ո Ր Ե Ն Ա Գ Ի, Վարք Մաշտոցի, ընագիրը, ձեռագրական այլընթացվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթություններով ի ձեռն պրոֆ. գ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941, էջ 50, Հատված [Ը]:

6 Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, Գ, ԾԳ, էջ 327:

7 Կ ո Ր Ի Լ Ե Ն. Պատմութիւն վարուց եւ մահուան Սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի. Վենետիկ, 1894 էջ 19 (երկրորդ տարբերակ)՝ «Եւ իսկոյն ի թարգմանութիւնս ձեռն արկեալ խորհրդաբար սկսանելով յԱռականն իմաստնոյն Սողոմոնի, բովանդակեալ զքսան եւ երկուս յայտնիսն, զՀին կտակարանսն յեղու ի Հայ բան»:



պը, երկու աշակերտների հետ, հենց Ասորիքում թարգմանած և ավարտած լինի Հին և Նոր կտակարանները... Մեզ թվում է, – շարունակում է ակադեմիկոսը հայազետը, – թե բնագրում ընդմիջարկություն է «բովանդակելով զքսան եւ երկու յայտնիսն եւ զնոր կտակս յեղու ի հայ բան» խոսքը, որևէ ձեռագրի լուսանցքից բնագրի մեջ մուծված: Խոսքն էլ անկապ է. «յեղու» բայը չի հարմարվում»<sup>8</sup>: Նախ, գանք զքսան եւ երկու յայտնիսն կասկածողությամբ. ըստ իս՝ յայտնիսն (հասկանալի «ութիւն» մասնիկով) պետք է ուղղել յայտնուիսն և կարգալ՝ յայտնութիւնսն: Քսաներկու հայտնութիւնների մասին Մովսէս Խորենացին պետք է որ իրազեկ լիներ հենց Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան»<sup>9</sup> ճառից և Հին կտակարանի լատին թարգմանութեան առթիվ Հիերոնիմոսի դրած նախաբանից<sup>10</sup>, որոնք հայերեն են թարգմանվել հայ դպրութեան վաղ շրջանում, ուստի և հետագա ընդմիջարկության ամենևին խնդիր չկա: Ըստ այս հեղինակների՝ քսաներկու հայտնութիւններ էին կոչվում եբրայերեն (Հին) կտակարանի կանոնական գրքերը, որոնք խմբակարգված էին եբրայական այբուբենի քսաներկու նշանագրերով, իսկ պարականոն (հունարեն ապոկրիֆ) գրքերը կոչվում էին ծածուկ յայտնութիւն կամ ծածկոյթ յայտնութեանց<sup>11</sup>: Ուրեմն, Խորենացու քսան և երկու յայտնութիւնսն կապակցութեամբ պետք է հասկանալ Հին կտակարանի կանոնական բնագիրը:

Անտարակույս, Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի հմուտ թարգմանիչն ու մեկնաբանը, ինչպէս Ստ. Մալխասյանն է, տքնել է Պատմահոր յուրաքանչյուր բառի վրա և քաջ ծանոթ պետք է լիներ նրա բառ ու բանի գործածութեան ամենատարբեր նրբերանգներին: Սակայն, գոնե այս դեպքում, այդպէս չէ: Ինձ համար անհասկանալի է, թե ինչ ասել է «յեղու բայը չի հարմարվում»: Ստ. Մալխասյանը զարմանալիորեն չի հիշում, որ Պատմահայրը յեղու բայը գործածել է առնվազն երեք անգամ հենց միայն «Պատմութիւն Հայոց»-ում, և երեք դեպքում էլ «մի լեզվից մյուսը փոխադրել» նշանակութեամբ: Պատմութեան հենց սկզբում, խոսելով քաղղեական մատյանները հունարեն լեզվի փոխադրելու մասին, Խորենացին գրում է. «Այլ եւ բազում արք անուանիք եւ իմաստութեան պարապեալք ի Յունաց աշխարհէն՝ հոգացան ոչ միայն զգիրս դիւանացն այլոց ազգաց թագաւորացն եւ զմեհենիցն յեղուլ ի յոյն բան»<sup>12</sup>: Հաջորդ անգամ, պատ-

8 Մ ո վ ս ե ս ի ո ռ ե ն ա ց ի. Հայոց Պատմութիւն, թարգմանութիւն, ներածութիւն և ծանոթագրութիւններ Ստ. Մալխասյանի, Երևան, 1968, էջ 365:

9 Երանելոյն Կիւրղի Երուսաղեմայ Հայրապետի Կոչումն ընծայութեան (այսուհետև Կոչումն ընծայութեան). Վիեննա, 1832, էջ 70:

10 Յիերոնիմոսի Վասն ի քսան եւ երկուս գիրս առ ի Հեբրայեցվոց զպատմութիւնսն բաժանելոյ. գերմաներէն-հայերէն ներածութեամբ եւ հայ-լատին բնագրով հրատարակեց Արիստակէս Վարզանեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1920, էջ 58-76: Կարծիք կա, որ այս հնագույն թարգմանութիւնը կատարվել է հունարենից ավագ թարգմանիչներից մեկի ձեռքով. տես՝ Ն ո ռ ա յ ը Բ ի ւ զ ա ն գ ի. Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք. Տփղիս, 1900, էջ 26: Ոսկան Երևանցին իր հրատարակած Աստվածաշնչում գետեղել է Հիերոնիմոսի լատիներեն նախաբանի (Hieronymi prologus galeatus) նոր թարգմանութիւնը, բառացի պահպանելով վերնագիրը «Զիերոնիմոսի առաջաբանութիւն սաղաւարտեալ», որ բացակայում է հնագույն թարգմանութեան մեջ: Արիստ. Վարդանյանը այն վերապել է իր հրատարակութեան մեջ (էջ 78-82):

11 Կոչումն ընծայութեան, էջ 68, 69, 70:

12 Ն ո ռ ե ն ա ց ի, Ա, Բ, էջ 8: Մի այլ տեղ նույն առիթով Խորենացին գրում է. «Այս մատեան հրամանաւ Աղեքսանդրի ի Քաղթէացոց բարբառոյ փոխեալ ի յոյն», Ա.թ, էջ 31:

մուկթյան երկրորդ գրքում, ասորի Բարդաժան պատմագրի Հայաստան դա-  
լու և Անի ամրոցում մեհենական պատմությունը ասորի և հույն լեզվով  
փոխադրելու առիթով ևս խորենացին դիմում է նույն արտահայտությունը՝  
«եմուս նա (Բարդաժան) յամուրն յԱնի, եւ ընթերցեալ դմեհենական  
պատմութիւնն, յորում եւ գործս թագաւորացն, յաւելլով յիւր եւ որ ինչ  
առ իւրեանն, եւ փոխեաց զամենայն ի լեզու ասորի. որ եւ ապա անտի յե-  
ղաւ ի յոյն ըսն»<sup>13</sup> (յեղաւ - անցյալ կատարյալն է յեղուլ բայի): Երրորդը  
մեր վերը բերած օրինակն է՝ Պատմության Գ գրքից: Այսպիսով, «յեղուլ ի  
յոյն բան», «յեղաւ ի յոյն բան», «յեղուլ ի հայ բան» արտահայտու-  
նները, որոնք ընկած են իրարից շատ հեռու՝ Ա, Բ, Գ գրքերում, խորենա-  
ցուն սիրելի ոճական դարձվածներ են՝ գործածված երեք դեպքում էլ  
նույն առիթով՝ քաղցրեական մատյանները, հայոց մեհենական պատմութ-  
յունը, ասորերին Հին և Նոր կտակարանները մի այլ լեզվով փոխադրելու  
իմաստով: Էլ ինչ «անկապ խոսքի» կամ «չհարմարվելու» մասին է հարցը:  
Պարզապես այստեղ գործ ունենք հայագիտության մեջ ոչ սակավ հանդի-  
պող դեպքերից մեկի հետ, երբ պատկառելի դիտնականի թեթև ձեռքով  
պատմական աղբյուրի կարևոր վկայությունը հայտարարվում է անվավեր  
ընդմիջարկություն, անկապ խոսք, որ իբր լուսանցքից մուծվել է բնադրի  
մեջ:

Մինչդեռ տեսնում ենք, որ խորենացու վկայությունը միանգամայն  
հավաստի է և հարազատ նրա ոճին, և ամբողջ խնդիրը միայն մեկնաբանե-  
լու մեջ է: Անշուշտ, չի կարելի կարծել, թե Մեսրոպն Ասորիքում երկու ա-  
շակերտների հետ կարող էր թարգմանել ամբողջ Հին ու Նոր կտակարան-  
ները: Իրողությունն այն է, որ նա ոչ թե թարգմանում, այլ ասորերեն Հին  
ու Նոր կտակարանները համառոտ փոխադրում է հայ լեզվի՝ յեղուլ ի հայ  
բան: Մասնավորապես չորս Ավետարաններն ամփոփ շարադրելու օրինակ  
կարող էր ծառայել Տատիանոսի Դիատեսարոն (քառապատում) կոչված ա-  
սորերեն համաբարբառը (Evangeliorum harmonica), որը մինչեւ 431 թ. Ե-  
փեսոսի երրորդ տիեզերական ժողովը լայն գործածության մեջ էր եղեսիա-  
յում, Մծբինում և հարակից շրջաններում<sup>14</sup>: Ակներևաբար Մաշտոցը Սա-  
հակ Պարթև կաթողիկոսից հատուկ հանձնարարություն է ունեցել այդ  
գործը ևս կատարելու:

Խորենացու սույն վկայության վավերականությունը հաստատելու հա-  
մար ունենք նաև մի կողմնակի ապացույց, որի վրա ուշադրություն է են  
դարձրել Ատ. Մալխասյանը և մյուս հետազոտողները: «Հայոց պատմութ-  
յան» մեջ պատմահայրը բերում է Կոստանդնուպոլսի ինքնազուլուս եպիս-  
կոպոս Ատտիկոսի թուղթը հայոց կաթողիկոս Սահակ Մեծին, որով հույն

<sup>13</sup> Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, Բ, ԿԶ, էԾ 201:

<sup>14</sup> Մ.թ. մոտ 170 թ. Հուստինիանոսի աշակերտ Տատիանոսը չորս ավետարանները  
միացրեց մեկի մեջ, և այդ ամփոփ ավետարանը կոչվեց հունարեն Դիատեսարոն (Τεσσαρα  
«չորս» բառից) կամ ասորերեն Dmakhla (խառն)՝ ի տարբերություն Mepharreshe (առան-  
ձին) ավետարանների: Եփրեմ ասորու (+373 թ.) մեկնության հայերեն թարգմանության  
մեջ իստև ավետարանը կոչված է «Համաբարբառ»: Ենթադրվում է, որ Դիատեսարոնը  
կազմվել է նախապես հունարեն, ապա թարգմանվել ասորերեն՝ դեռևս կազմողի կենդա-  
նության օրոք: Ոմանց կարծիքով էլ սկզբնազիրը եղել է ասորերեն: Տե՛ս Հ. Գ. Մ Ե Լ -  
ք ո ն յ ա ն. Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III-V դդ.). Երևան  
1970, էջ 117-118, 120:

աթոռակալը հանդիմանում է հայոց կաթողիկոսին, թե «ինչպես նա, թողած եկեղեցու աղբյուրը Հովհան Ոսկեբերանին և զանց անելով նրա վարդապետությունը, որով լուսավորվեցին ամբողջ աշխարհն ու համայն քրիստոնյաները, իր ծարավը կամեցավ հագեցնել անձրևաջրերով. «Եւ առաւել ընդ այս զարմանամք, եթե զիա՞րդ թողեր զաղբերն եկեղեցւոյ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ սովաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ 'ի նմանէ վարդապետեալ ուսանի, ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա: Եւ ձեր զանց ղնովաւ արարեալ, կամեցայք 'ի սահանական ջրոց զփափագ ծարաւոյն յագեցուցանել»<sup>15</sup>: Անկախ նրանից, վավերակա՞ն է Ատտիկոսի այս թուղթը, թե Խորենացու հորինածը, — միևնույն է՝ Ոսկեբերանի Վարդապետութիւնն անտեսելը որևէ կերպ չէր կարող առնչվել կամ համեմատվել Աստվածաշնորհ հայոց գրերի դյուտի հետ: Կնչանակի, Մեսրոպն Ասորիքում իսկապես շարադրած է եղել ինչ-որ գավանաբանական գրվածք, որի համար էլ (և ոչ թե նրա ստեղծած հայոց գրերի համար) Ատտիկոսը քամահարանքով ասորական Վարդապետութիւնն անվանում է «սահանական ջուրք» (Հոսքաջրեր): Աստվածաշնչի լիակատար հայերեն թարգմանությունը պահանջում էր երկար տարիների տքնաջան աշխատանք: 'Իյուրին չէր լինելու ինքնին նաև նրա բազմացումը՝ Մեծ Հայքի 180 գավառներում զանգվածաբար տարածելու համար, եթե մանավանդ նկատի առնենք, որ դրան պետք է նախորդեր նորագյուտ հայերեն նշանագրերը երկրով մեկ ուսուցանելու դժվարին խնդիրը, ինչին և ձեռնամուխ եղան Սահակն ու Մեսրոպն առաջին հերթին: Ուստի և հայ եկեղեցու առաջնորդները հոգ տարան՝ Աստվածաշնչի լիակատար թարգմանությունից առաջ նորագյուտ հայերեն գրերով ստեղծելու համառոտ, առձեռն Աստվածաշունչ, որը մեծաթիվ քարոզիչների ձեռքին պետք է ծառայեր որպես հավաստի գրավոր հավատամատյան՝ Մեծ Հայքի գավառներում կենաց խոսքը քարոզելու և իբրև Վարդապետություն՝ դպրոցներում դասավանդելու համար:

Խորենացու հաղորդածը՝ Աստվածաշունչը հայերեն համառոտելու մասին՝ հար և նման վկայություններով գտնում ենք թե՛ Ագաթանգեղոսի և թե՛ Կորյունի մոտ: Ագաթանգեղոսի Պատմությունյան Գ մասի՝ «Դարձ փրկութեան» գրքի հեղինակը, որ ըստ իս Սահակ Պարթևն է, ցույց տալով, որ ս. Գրիգորը իր Վարդապետությունը համառոտել է Աստվածաշնչից (տե՛ս ստորև, էջ 21–22), գրում է. «Յայնմ ժամանակի երանելի ցանկալի և անպայման սքանչելի լինէր երկիրս Հայոց, որպես զՄովսէս, որ յանկարծ ուրեմն օրէնսուցոյց հերբայական բանակին լինէր ամենայն մարգարէական դասուն, և կամ իբրև զյառաջադէմն Պաւղոս բովանդակ առաքելական ղնդաւն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի՝ սոյնպէս և սա (Գրիգորիոս) եկեալ հասեալ երևեալ հայաբարբառ հայերէնախօս գտաւ» (Ագաթ. § 854): Իր հերթին, Կորյունը նշում է, թե նորաստեղծ գրերը Վաղարշապատ բերվելուց հետո Սահակն ու Մաշտոցը, աստվածային գործի մշակութամբ ձեռնարկեցին ավեաարանական արվեստը՝ թարգմանել, գրել և ուսուցանել<sup>16</sup>: Եվ այստեղ նա անմիջապես մեջ է բերում Ադա-

15 Խ ո Ր Ե Ն ա ց ի, Գ, Ծ է, էջ 336:

16 Կ ո Ր Յ ո ս և ն. Վարք Մաշտոցի, [ԺԱ], էջ 54:



Թանգեղոսից վերոհիշյալ հասովածը՝ աչքի առաջ ունենալով դարձյալ Մաշտոցի համառոտ Աստվածաշունչը, բայց դրա ստեղծումը վերագրում է միաժամանակ երկու հավասարյալներին (զուգակիցներին)՝ Սահակին և Մաշտոցին. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարդարէական դասուն, և յառաջադէմն Պաղոս՝ բովանդակ առաքելական զնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան»<sup>17</sup>: Ինչպես որ ս. Գրիգորը բոլոր մարդարենների ու առաքյալների խոսքը և Քրիստոսի ավետարանը բանավոր քարոզեց հայերեն վաղարշապատում հավաքված ժողովրդին, այդպես էլ երկու զուգակիցները՝ Սահակն ու Մաշտոցը, նույնը շարադրեցին գրավոր հայերեն նորաստեղծ գրերով: Խորենացին համառոտ Աստվածաշնչի հեղինակ է ճանաչում միայն Մեսրոպ Մաշտոցին, իսկ Կորյունը՝ երկու հավասարյալներին, Սահակին ու Մաշտոցին: Միայն այսպես պեք է հասկանալ Կորյունի Հին ու Նոր կտակարանները «յանկարծ ուրեմն» (իսկույնեթ) հայախոս դարձնելը: Եվ դա տեղի ունեցավ ըստ Խորենացու՝ Ասորիքում, իսկ ըստ Կորյունի՝ նորաստեղծ գրերը Հայաստան բերելուց կարճ ժամանակ անց:

Մ. Աբեղյանը և ուրիշներ Կորյունի խոսքն ընկալել են իբրև Հին ու Նոր կտակարանների լիակատար ամբողջական հայերեն թարգմանութիւն Սահակի և Մաշտոցի ձեռքով<sup>18</sup>՝ ուշագրութիւն չդարձնելով, որ անմիջապես զրանից հետո Կորյունը շարունակում է. «Իսկ իբրև զչափ առեալ զիրացն հաստատութեան, և [ս] համարձակագոյն եւ առաւելագոյն զաշակերտութիւնն նորագիւտ վարդապետութեանն խմբէին ուսուցանել եւ թեքել, և պատրաստական քարոզութեանն անգէտ մարդկան յօրինել», «Իսկ երբ իրերի հաստատութիւնը փորձեցին, ապա ավելի համարձակ և ավելի շատ էին ժողովում նորագյուտ ուսման համար աշակերտներ սովորեցնելու, կրթելու և անգետ մարդկանց քարոզելու համար պատրաստելու»: Անհնար է պատկերացնել, որ բերված նորաստեղծ նշանագրերը գեռևս ինչպես հարկն է գործնականում չստուգած՝ Սահակն ու Մաշտոցը ձեռնարկեին ու ավարտեին Աստվածաշնչի լիակատար թարգմանութիւնը, որն ինքնին երկար տարիների տքնաջան աշխատանք էր պահանջում: Իրականում, ինչպես տեսանք, Կորյունի և Խորենացու վկայութիւնները միանման վերաբերում են Հին և Նոր կտակարանների համառոտ շարագրմանը: Հենց այս համառոտ Աստվածաշունչն է, որ Կորյունը, հետևելով Ագաթանգեղոսին (§ 776), «նորագիւտ վարդապետութիւն» է անվանում, ոչ թե «նորագյուտ ուսում», ինչպես կարծում են Կորյունի մերօրյա թարգմանիչները:

Աստվածաշնչի այս համառոտումը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով, նախորդել է Սուրբ Գրքի ամբողջական թարգմանութիւնը, որն, ըստ Խորենացու, առաջին անգամ կատարվեց միայն Մեծն Սահակի ձեռքով ասորեերենից

17 Նույն տեղում, էջ 56:

18 Տե՛ս Մ. Աբեղյանի առաջաբանը՝ Կ ո Ր Յ ու Ն. Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանութիւնը ներածական ուսումնասիրութիւնով, առաջաբանով և ծանոթագրութիւններով Մ. Աբեղյանի (այսուհետև՝ Կոր.), Երևան, 1962, էջ 48 և ծան. 88, էջ 151–152:

Հունարեն չլինելու պատճառով<sup>19</sup>: Դա տեղի ունեցավ, ըստ խորենացու, այն ժամանակ, երբ Մեսրոպն արդեն ստեղծել էր վրացերեն աղվաներեն նշանագրերը<sup>20</sup>: Իսկ 431 թ. Եփեսոսի ժողովից Հետո Սահակն ու Մեսրոպն աշակերտների Հետ նորից թարգմանեցին նորոգեցին «զմի անգամ թարգմանեալն փութանակի» (մի անգամ հապճեպ թարգմանածը)՝ նոր բերված Հունարեն Սուրբ Գրքի ստույգ օրինակներով<sup>21</sup>: Այստեղից պարզվում է, որ փութանակի թարգմանած Սուրբ Գիրքը Սահակ Պարթևի ասորերենից կատարած առաջին թարգմանությունն է: Վերջին տեղեկությունը խորենացին քաղել է անմիջապես Կորյունից, ըստ որի, երբ Եդեսիա Կոստանդնուպոլիս ուղարկված թարգմանիչները (Եփեսոսի ժողովից Հետո) բաղում շնորհադիր հայրերի գրվածքների, Նիկիայի և Եփեսոսի կանոնների Հետ հայոց աշխարհ բերեցին աստվածատուր գրքերի (Աստվածաշնչի) հաստատուն օրինակները և «առաջի դնէին հարցն ղբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ»<sup>22</sup>, երանելի Սահակը Եզնակի (Եզնիկ Կողբացու) Հետ միասին առաջվա հանկարծագրուտ հապճեպ թարգմանությունները ստուգեց բերված ճշգրիտ օրինակներով. «Գարձեալ յետ այնորիկ առեալ (Սահակայ) հանդերձ Եզնակաւ գյառաջագոյն գյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք»<sup>23</sup>: Կորյունն այստեղ խոսում է թարգմանությունների մասին, բայց մինչ այդ հիշում է միայն մեկ թարգմանություն, որ կատարվեց մաշտոցյան հայերեն նորագրուտ նշանագրերը փորձելու շրջանում և որը նա մատնանշում է «յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն...»<sup>24</sup> սկսվածքով, — սրանով միայն կարելի է բացատրել «յանկարծագիւտ» («յանկարծ ուրեմն ...գտան» խոսքից) և «փութանակի» մակդիրները: Բայց դա Հենց Մաշտոցի ստեղծած և Սահակ Պարթևի լրացրած ու խմբագրած Համառոտ Աստվածաշունչն է, այլապես պետք է կարծել, որ դրանք երկու տարբեր թարգմանություններ են եղել «գյանկարծագիւտ [և] զփութանակի թարգմանութիւնս»:

Սրա Հետ մեկտեղ միանգամայն այլ կերպ պետք է հասկանալ Կորյունի Հետևյալ վկայությունը՝ «Իսկ Երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն գարձուցեալ»<sup>25</sup>: Կորյունի «եկեղեցական գրոց գումարութիւն» արտահայտության տակ Հետազոտողները մինչ այժմ հասկացել են ժամասացությունների գրքերը (ժամագիրք, պատարագամատույց, տօնական)<sup>26</sup>: Այդ սխալը բացահայտ-

19 Խ ո բ ն ա ց ի, Գ, ԾԴ, էջ 329: Հայերեն Աստվածաշունչը ասորերենից թարգմանելու մասին մի ուրիշ վկայություն էլ պահպանվել է Սուտ-Կորյունի մոտ: Նա Հաղորդում է, թե հայ գրերի գյուտից Հետո Եզնիկն ու Հովսեփը ուղարկվեցին Եդեսիա, որ «Յաստի բարբառոյն Սուրբ Գիրս նոր թարգմանեսցեն ի հայ լեզու» (Կ ո Ր ի ւ ն. Պատմութիւն վարուց, էջ 32):

20 Կորյունի վկայությամբ («Վարք Մաշտոցի», /ԺԶ/ էջ 70), երբ Մաշտոցն արևմտյան կողմերը ուսուցանելուց Հետո վերադարձավ Վաղարշապատ՝ Աղվանք գնալու, նրանց լեզվի նշանագրեր ստեղծելու համար, Արևելյան Հայաստանում արդեն թագավորում էր Վոսաճապուհի որդի Արտաշես Վերջինը (422-428):

21 Խ ո բ ն ա ց ի, Գ, ԿԱ, էջ 343:

22 Կ ո Ր յ ո ւ ն. Վարք Մաշտոցի, [ԺԹ], էջ 76

23 Նույն տեղում:

24 Կ ո Ր յ ո ւ ն. նշվ. աշխ. [ԺԱ], էջ 54:

25 Կ ո Ր յ ո ւ ն. նշվ. աշխ. [ԺԹ], էջ 76:

26 Տե՛ս Մ. Աբեղյանի առաջաբանը՝ Կոր., էջ 49-50 և ծան. 124, էջ 164:



վում է Կորյունի մի նույնպիսի վկայություն, որ գտնում ենք նրա նախաբանում և որը վրիպել է այս խնդրի մեկնաբանների ուշադրությունից. «Իսկ մեծին Մովսէսի զառաւելագոյն զաստուածամուխ մերձաւորութիւն՝ ամենայն եկեղեցական գրով(ք) Հնչեցուցեալ»<sup>27</sup>: Այստեղ Կորյունը «եկեղեցական գիր(ք)», անկասկած, դործածել է «Սուրբ Գիրք» իմաստով, որն էլ նա առաջին հերթին վկայակոչում է հենց մեծ Մովսէսի հոչակր ցույց տալու համար: Ակնհայտ է, որ «ամենայն եկեղեցական գիրք» և «եկեղեցական գրոց գումարութիւն» միևնույն բանը պետք է նշանակեն: Հիերոնիմոսի նախաբանի վերը հիշված հնադուլյն հայերեն թարգմանություն մեջ, որ, ըստ հմուտ ոճաբանների, պատկանում է թարգմանչաց առաջին դասին և կատարվել է V դ. առաջին քառորդում, երբայական Հին կտակարանը բաժանվում էր երեք մասի. առաջին [գումարութիւն] Մովսէսի հինգ գիրք կամ օրէնք, երկրորդ գումարութիւն՝ Մարգարէից ութ գիրք, երրորդ գումարութիւն՝ սրբագիրք, Սաղմոսք և այլք: Միաժամանակ ամբողջ Հին կտակարանը ևս իր քսաներկու գրքերով կոչված է «գումարութիւն»<sup>28</sup>: Այսպիսով «եկեղեցական գրոց գումարութիւն» նշանակում է Սուրբ Գրքի ամբողջություն: Հենց իբրև Սուրբ Գիրք ընդունելով էլ Կորյունը կարևոր է համարում այս միակ անգամ շեշտելու Սահակ Պարթևի ձեռքով հունարենից թարգմանված լինելը<sup>29</sup>: Ղազար Փարպեցին ևս Կորյունի «եկեղեցական գրոց գումարութիւն» կապակցությունը հասկացել է ոչ այլ ինչ, քան Սուրբ Գիրք, որ Սահակը թարգմանել էր հունարենից, ուստի և գրել է. «Աստի ժողովյալ ամենայն աւագ քահանայք աշխարհին Հայոց հանդերձ երանելեալն Մաշտոցիւ եւ ամենայն նախարարօք աշխարհիս Հայոց և մեծամեծ տանուտերօք առ թագաւորաւն սկսան աղաչել զսուրբ կաթողիկոսն Սահակ, արկանել զանձն յաշխատութիւն հոգևոր եւ թարգմանել զաստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուոյ ի հայ բարբառս»<sup>30</sup>:

Սակայն սույն հետազոտությունն սպաստակն է ոչ միայն հավաստել խորենացու վկայության վավերականությունը՝ Մաշտոցի ձեռքով համառոտ Աստվածաշնչի ստեղծման մասին, այլ ավելի քան բավարար ապացույցներով հաստատել, որ Մաշտոցի ստեղծած համառոտ Աստվածաշունչը պահպանեց իր գոյությունը նաև հետագայում և մեր ձեռքն է հասել Ագաթան-

27 Կ ո Ր Ե Ն Ս. Վարք Մաշտոցի, [Ա], էջ 28:

28 Յերոնիմեայ Վասն ի քսան եւ յերկուս գիրս..., էջ 66, 68, 72. Հմմտ. նաև «Աստուածակերտ գումարութիւն» (էջ 72), «Արտաքոյ քան զայս գումարութիւն գիրք գտանիցին» (էջ 76) վերջին երկու օրինակով ակնարկվում է ամբողջ Հին կտակարանը:

29 Հարկ է ուշադրություն դարձնել նաև, թե ինչ աւիթով է Կորյունը գործածում «եկեղեցական գրոց գումարութիւն» ասվածը: Մաշտոցի վարքագիրն ուզում է ասել, թե երբ (հունարեն)ստույգ կտակարանները հանձնեցին սուրբ Հայրերին (Սահակին և Մաշտոցին), Սահակը մինչ այդ արդեն Սուրբ Գիրքն ամբողջությամբ հունարենից հայերեն էր թարգմանել: Եվ քանի որ այդ առաջվա (յառաջագոյն) թարգմանությունը հապճեպ (փութանակի) էր արվել, ուստի հարկ եղավ այն ստուգել բերված ճշգրիտ (կանոնական) օրինակներով: Էլ ի՞նչ ժամասացության գրքերի մասին կարող է խոսք լինել: Կորյունի «Կանխաւ ի հայերէն գարձուցեալ»-ը հենց նույն «յառաջագոյն փութանակի» թարգմանությունն է, խորենացու մոտ «զմի անգամ թարգմանեալն փութանակի» (Գ. ԿԱ, էջ 343): Կորյունը և խորենացին համերաշխ են Սուրբ Գրքի առաջին հայերեն թարգմանության հարցում՝ երկուսն էլ այդ թարգմանությունն անվանում են «փութանակի», երկուսն էլ այն վերագրում են միայն Սահակ Պարթևին, թեև թարգմանության բնագրի լեզվի խնդրում տարակարծիք են:

30 Ղ ա զ ա Ր Փ ա Ր պ ե ց ի. Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեանց. Տփղիս, 1904, գրուագ Ա, գլ. ԺԱ, էջ 16:

գեղոսի Պատմութեան կազմում «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» վերտառութեամբ: Մաշտոցյան Համառոտ Աստվածաշնչի նույնացումը Ս. Գրիգորի Վարդապետութեան Հետ Հիմնավորում ենք հետևյալ փաստարկներով:

Ա. Առաջինը Ագաթանգեղոսի պատմութեան հեղինակն է վկայում, որ երանելի Գրիգորիոսը հեթանոս հայերին իր Վարդապետութիւնը քարոզում էր ոչ թե (Սուրբ Գիրքը) այս ու այն ծայրից քաղելով (ծայրաքաղինչ արարեալ), ոչ թե օղից վերցրած բառերով (օղաբանս) կամ սրընթաց էր խոսում, այլ հստակապատում անելով (յստակապատում արարեալ), այսինքն՝ պարզեցրած պատմելով ուսուցանում էր ամենքին, սկսելով ամենասկզբից՝ աշխարհահամար, աշխարհապատում արարչութիւնից, մինչև Աստծո սուրբ պատգամախոսների (մարգարեների) առաքինի գործերն ու հոգեպատում պատգամները, և աստվածասեր այրերին (առաքյալներին) Քրիստոսի ավանգած ճշմարիտ հրահանգները՝ նրանցից յուրաքանչյուրի աստվածամուկս կյանքով ու վաստակասեր հոգևոր վարքով, վկայութեամբ հանդերձ: Եվ նրանց ծանոթացնում էր Աստծո խոսքին՝ կարգված ու հարմարեցված Սուրբ Հոգու բոլոր պատգամներով. ընգամին և սրա մեկնութիւնը գրեց (Սուրբ Հոգու) զորութեամբ (Ագաթ. § 723-724):

«Ոչ եթէ ծայրաքաղ ինչ արարեալ օղաբանս կամ սրավարս խօսեցաւ», — այս առարկութեամբ Պատմութեան հեղինակը կանխում է քննախոսների հնարավոր կշտամբանքը, իբր համառոտողը (ս. Գրիգոր կամ Մաշտոց) տարբեր տեղերից կցմցելով թուուցիկ անցել է Ս. Գրքի վրայով: Բայց այս առարկութիւնն իսկ վկայում է, որ «յստակապատում արարեալ» խոսքը վերաբերում է հենց համառոտելուն, միայն թե կարգված և հարմարեցված և ոչ թե ծայրաքաղ արած:

Իսկ որ Գրիգորիոսի ձեռքին եղել է Աստվածաշունչ մատյանը (հավանաբար հունարեն), հաստատում է Վարդապետութիւնը հենց նրա բերանով: «Ձայս վկայութիւն ասացեալ՝ կարգեցաք ի ձեր լսելիս զսուրբ հաւատս ճշմարիտս, որ յայտ յանդիման վարդապետեցին մեզ Գիրք սուրբ սուրբ Հոգուովն, <...> եւ ավետարանեցաւ սրբովք մարգարէիւք եւ առաքելովք, եւ տուաւ մեզ հաստատութիւն հաւատոց» (Ագաթ. § 361): «Այլ ես զամենայն պատգամս աստուածութեանն կարգեցի եւ եղի ի լսելիս ձեր առ հասարակ, ոչ թաքուցեալ զօգուտն. ի սկզբանցն մինչեւ ի վախճան՝ զամենայն պատմեցաք ձեզ» (Ագաթ. § 716):

Այսու համոզվում ենք, որ հենց V դ. սկզբին ս. Գրիգորի Վարդապետութիւնը ընդունված և ճանաչված էր հայ եկեղեցու կողմից որպէս ամփոփ, առձեռն Աստվածաշունչ, որը Հին կտակարանի Մնդոց գրքի նման սկսվում է աշխարհի արարչութիւնից (Ագաթ. § 259) և ավարտվում Նոր կտակարանի նման՝ առաքյալների ընդհանրական թղթերի վկայութիւններով (Ագաթ. § 700-714)<sup>31</sup>: Հովհաննու Հայտնութիւնը, Նոր կտակարանի վերջին գիրքը, 431 թ. Եփեսոսի ժողովից առաջ, ինչպէս և հետո, չէր մտնում Նոր կտակարանի մեջ (տե՛ս ստորև):

31 Ա. Մ ու շ ե ղ յ ա ն. Ագաթանգեղոսի Հայոց Պատմութիւնը և հին վրացերեն «Վասն հաւատոյ» զավանաբանական երկը. — «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1987, N 4, էջ 66-68:

Հնարավոր է նաև, որ Երանելի Գրիգորիոսի ձեռքով Ս. Գիրքը հստակապատում անելու տեղեկությունը եղել է Հենց IV դ. ավանդված նրա հունարեն Վարքում, այդ դեպքում առավել ևս տրամաբանական է, որ նույն օրինակով ստեղծված մաշտոցյան համառոտ Աստվածաշունչը պիտի ընդունվեր իբրև «Վարդապետություն սրբոյն Գրիգորի»:

Բ. Ազաթանգեղոսը հայտնում է, թե Գրիգոր Լուսավորիչը Վարդապետությունը քարոզել է վաթսունհինգ (Ագաթ. §722) կամ վաթսունվեց (Ագաթ. §729) օրում: Ըստ իս, այդ թիվը խորհրդանշում է, որ ս. Գրիգորի Վարդապետությունը, ինչպես և Մաշտոցի համառոտ Աստվածաշունչը, շարագրված է եղել Հին և Նոր կտակարանների 65 կանոնական գրքերի հիման վրա: Եվ, իսկապես, ըստ Կյուրեղ Երուսաղեմացու (315-386թթ.) ինչպես և Հիերոնիմոսի (+420թ.) Հին կտակարանի քսաներկու գրքերը պարունակում էին 39 անուն կանոնական գործ, դրանք կանոնյալ ճանաչվեցին նաև 364 թ. Լավոդիկեի եկեղեցական ժողովի կողմից<sup>32</sup>: Ըստ Կյուրեղի և Լավոդիկեի ժողովի ցուցակների, Նոր կտակարանի կանոնը ամփոփում էր 26 անուն գործ՝ 4 ավետարան, Գործք առաքելոց, 7 ընդհանրական թուղթ, Պողոս առաքյալի 14 թղթերը, ինչպես ներկայիս Նոր կտակարանը՝ առանց վերջին գրքի՝ Հովհաննու Հայտնության, որը չի հիշատակվում նաև վերոհիշյալ ցուցակներում և բացակայում էր նույնիսկ 431 թ. հաստատված Նոր կտակարանում: Այսպես, Եփեսոսի ժողովից հետո Եգեսիայի Ռարուլաս եպիսկոպոսը, արգելելով Դիատեսարոնը, փոխարենը պործածություն մեջ դրեց իր կաղամած ասորերեն Նոր կտակարանը, որի կաղամած ընթացակարգում էր Հովհաննու Հայտնությունը՝ անշուշտ, այն պատճառով, որ կանոնական չէր համարվում<sup>33</sup>: Ուրեմն Ազաթանգեղոսի նշած 65-ը ոչ այլ ինչ է, քան Հին և Նոր կտակարանների կանոնական գրքերի գումարը (39+26)<sup>34</sup>: Մեր այս ենթադրությունը հաստատվում է նաև Մովսես Կաղանկատվացու խորհրդանշական վկայությամբ, ըստ որի,

32 Հին և Նոր կտակարանների կանոնական գրքերի մասին մանրամասն տե՛ս Ա. Մ. ու շ. ե. ղ. յ. ն. Կորյուն թե՛ Ազաթանգեղոս բնագրերի քննությունն ու տեսանկյուններից. – «Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, N2, էջ 59-60. ն ու յ ս ի դոկտորական ատենախոսությունը «V գարի Հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ». Երևան 1996, էջ 37-38:

33 Rubens D u v a l. La literature syriaque. Amsterdam 1970, p. 42.

34 Տե՛ս նաև Ա. Մ. ու շ. ե. ղ. յ. ն. Ազաթանգեղոսի Հայոց Պատմությունը և Հին վրացերեն «Վասն Հաւատոյ» գաղափարական երկը, էջ 67. ն ու յ ն ի՝ Կորյուն թե՛ Ազաթանգեղոս բնագրերի քննությունն ու տեսանկյուններից, էջ 60: ն ու յ ն ի՝ դոկտորական ատենախոսություն 1996, էջ 38: Ուխտանեսը երկու անգամ հիշատակում է Ս. Գիրքը վաթսունհինգ օրում վարդապետելու մասին, բայց ոչ մի բացատրություն չի տալիս «Վարդապետե՛ց <...> աւուրս վաթսուն եւ հինգ որպէս ասէ. յԱդամայ սկիզբն արարեալ» – Ու ի տ ա ն է ս. Պատմութիւն Հայոց. Վաղարշապատ, 1871, էջ 94-95: Ասողիկը յուրովի է մեկնաբանում վաթսունհինգ օրերի հարցը «Եւ ի նմին աստուածաճրաչ յայտնութեամբ ելեալ ի վիրայէն սուրբն Գրիգոր յուսաւոր վարդապետութեամբ սկիզբն առնէ եւ բշկութեան հարուածոցն. որ հինգ օր անսուղ մնացեալ ամենայն բազմութեանն, ունկն դնելով վարդապետութեան սրբոյն Գրիգորի, որ են յառաջաւոր պահք ամի ամի պահեալք մինչև ցայժմ. թող զայլ ևս վաթսուն օր վարդապետութեան նորա» (Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. Պետերբուրգ, 1885, էջ 61): Առաջավոր պահքը ս. Գրիգորի Վարդապետության հետ կապելու միտքն Ասողիկը հավանորեն վերցրել է Ջենոբ Գլախից. «և նորա ելեալ ի վիրապէն – Ա. Մ.) ժողովեաց զնոսա առ ինքն, և Հինգ օր թողու զնոսա անսուղ առաջի իւր կալով, լսելով զբարոզութիւն վարդապետութեան նորա: Այս առաջին պահք եգաւ յաւուրս սրբոյն Գրիգորի <...>. զոր և Առաջաւոր կոչեմք» (Ջ ե ն ո բ Գ լ ա կ Ա ս ո Ր ի. Պատմութիւն Տարօնոյ. Վենետիկ, 1889, էջ 23):



Երուսաղեմի Գյուլու իսաչի կոչված կաթողիկե եկեղեցին ուներ «վաթսուն եւ հինգ սիւն ի վերոյ եւ ի ներքոյ երկարութեանն»<sup>35</sup>:

Դ. Ազաթանգեղոսի վկայությամբ, Աստվածաշունչը հստակապատում անելու հետ՝ Երանելի Գրիգորիոսը սուրբ Հոգու զորությամբ գրեց նաև նրա մեկնությունը (§724): Եվ իսկապես, այդ մեկնությունը մենք գտնում ենք Վարդապետության մեջ՝ միջանկյալ հավելվածի ձևով, թեև առանց որևէ վերտառություն: Վարդապետության §497-ից սկսվում է նոր բաժին<sup>36</sup> սուրբ Հոգու գալստյան մասին՝ նախաբանով հանդերձ. §499-ում բերվում է Գործք առաքելոց-ի հայտնի դրվագը (Բ, 1-4)՝ Երուսաղեմի վերնատանը Սուրբ Հոգու իջնելը առաքյալների վրա հրե լեզուների ձևով, իսկ §500-ում՝ Իսկաթ մարգարեի կանխասացությունը հրի նմանությամբ Աստծո Հոգու հայտնվելու մասին. «Աստուած մեր յայտնապէս եկեսցէ, եւ հուր առաջի նորա գնասցէ, եւ շուրջ զնովաւ մրրիկ յոյժ. <...> եւ ժողովել առ ինքն զսուրբս իւր» (սաղմ. ԽԹ, 3-5), որոնց մաս առ մաս լուծմունքն ավարտվում է §506-507-ում՝ հրի երկու բնույթների (լույս տվող և այրող) բացահայտմամբ: Ապա հաջորդում է դառնություն և ուրախություն, դառը մրուրով և անուշ գինով լցված երկու բաժակների մատուցակության մասին մի բանախոսություն (Ազաթ. §507-516, 538-551, 560-564): Իսկ §510-ից սկսվող նոր գլխում ս. Գրիգորն անակնկալ ընդհատում է Սուրբ Գրքի համառոտ վերապատումը և, Երուսաղեմի դեպքերից խոսքը դարձնելով Վարդապետի հնձանի առաջ խոնված հեթանոս հայերին՝ հայտնում է, թե քաղցր գինու և դառն մրուրի երկու բաժակները Հռիփսիմյան կույսերի ձեռքով հասել են արդեն Հայաստան: Իսկ այդ բաժակները խորհրդանշում են հավատքով հավիտենական կյանք վայելելու շնորհ կամ երկմտությամբ ու անհավատությամբ հավիտենական մահվան արժանանալու պատիժ, որ ս. Գրիգորը ժողովրդին մատչելի ձևով բացատրում է առօրյա կենցաղից քաղ ծանոթ վարուցանքի, արդար ցորյանի և անօրեն փշի սերմերի ծլարձակման փոխաբերությամբ: Մեկնությունն ավարտվում է բնության գարնանային զարթոնքի ճոխ համապատկերով, Տիրոջ վերջին դալստյան փոզհարությունը (§641-659): §510-ից սկսած, այս միջանկյալ հավելվածն ուղեկցվում է Հռիփսիմյան կույսերի Հայաստան բերած պատժի և ուրախության երկու բաժակների մատուցակության, նրանց նահատակվելու և երկինք վերանալու մասին բազմաթիվ անդրադարձերով, որ մեծ մասամբ քաղված են Ազաթանգեղոսի Ա գրքի Հռիփսիմյաց վկայաբանությունից: Ուշագրավ է, որ միջանկյալ հավելվածից դուրս Վարդապետության մյուս մասերում Հռիփսիմյան կույսերի վերաբերյալ որևէ ակնարկ այլևս չկա: Եզրակացությունը միակն է՝ Ազաթանգեղոսի Պատմության հեղինակը, որ ամենայն հավանականությամբ Սահակ Պարթևն է, Ա գիրքն ավարտելուց հետո, Գրիգոր Լուսավորչի Վարքն ու Վարդապետությունը ամբողջացնե-

35 Մովսէսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին. Մ., 1860, Բ, ԾԱ, էջ 225:

36 Վարդապետության անգլերեն թարգմանության իր ներածության մեջ Ռ. Թոմսոնը §489-ից մինչև § 586-ը համարում է առանձին բաժին (section), որում «Վարդապետությունը կենտրոնանում է Սուրբ Հոգու գալստյան և առաքյալների գործունեության վրա որպես «բարոգիչների» (R. W. Thomsom. The Teaching. Introduction, p. 31): Իրականում 489-496 պարբերություններում ամփոփ շարադրված են Հիսուսի հարությունը և համարաձուլումը: Իսկ Սուրբ Հոգու բաժինն սկսվում է §497-ից:

լու համար, Պատմության մեջ ներառել է և Մաշտոցի համառոտ Աստվածաշունչը, վերջինիս մեջ մուծելով §724-ում հիշատակված բավական ծավալուն մեկնությունը՝ §510-659, որի համար ակներև հիմք են ծառայել հանդերձյալ կյանքի և հարություն հույսի վերաբերյալ Գրիգոր Լուսավորչի (կամ Մաշտոցի) այն ճառերը, որոնք ըստ Ագաթանգեղոսի և Կորյունի հավաստման (Ագաթ. §886, Կոր. Ի) եղել են «Հաճախապատում ճառերի» ժողովածուում, բայց այսօր չկան: Օգտագործվել են նաև առանձին գրություններ «Հաճախապատումի» այլ ճառերից, որով և Մաշտոցի համառոտ Աստվածաշունչն արժանապես կոչվեց «Վարդապետություն սրբոյն Գրիգորի»: Իրրև օրինակ կարող ենք մատնանշել Ագաթ. §678-ում բերված դրույթը՝ «Երկու ինչ իրք պաշտեցան. մին կենաց աւետիք եւ միւսն արհաւիրք սպառնալեաց պատուհասից», որը մի քանի անգամ հիշվում է «Հաճախապատում» ճառերում՝ և այնտեղից էլ մուծվել է Վարդապետության մեջ, բայց անգգուշաբար գետեղվել Հովել մարգարեից բերված քաղվածում (մեր նշած անկյունավոր փակագծերի տեղում)՝ «Արիւն եւ հուր եւ մրրիկ ծխոյ. <...>: Արեգակն դարձցի ի խաւար, եւ լուսին յարիւն» (Յովէլ, Բ. 31):

Եթե Վարդապետությունից մտովի անջատենք նշված ամբողջ միջանկյալ հավելվածը, ապա §509-ին կհաջորդի անմիջապես §660-ը և հոգեգալստյան ընդհատված գրվագը վերստին կգտնի իր իսկական շարունակությունը, ինչպես որ եղել է Մաշտոցի սկզբնական ընագրում, և այնուհետև շարագրանքը կընթանա դարձյալ Գործք առաքելոց-ի հունով. օրինակ Հովել մարգարեի կանխասացությունը՝ Աստծո Հոգին հետին օրերում սփռելու մասին (Բ, 28-32) նույն ծավալով մեջ է բերված և՛ Գործք, Բ, 17-21-ում, և՛ Ագաթ. §666-ում (Ագաթանգեղոսը կցում է նաև դրա մաս առ մաս լուծմունքը մինչև §679 ներառյալ): Բայց այդ կանխասացությունը Գործք առաքելոց-ում կապված է Պենտեկոստի հոգեգալստյան հետ, ուստի և Մաշտոցի համառոտ Աստվածաշունչում ևս պետք է մոտ գտնվեր §499-ին, որը հենց վերաբերում է Պենտեկոստի հոգեգալստյան գրվագին:

Այժմ առավել քան ակնհայտ է դառնում, որ Ագաթանգեղոսի Պատմության հեղինակը՝ §723-724-ում և §854-ում խոսելով ս. Գրիգորի համառոտ «յստակապատում» Աստվածաշունչի մասին, իրականում աչքի առաջ ունի հենց Ասորիքում Մեսրոպ Մաշտոցի համառոտած Հին և Նոր կտակարանները, որի մասին վկայում է Խորենացին և որը վերոհիշյալ «Մեկնություն» միջանկյալ հավելվածի հետ կազմում է ս. Գրիգորի Վարդապետությունը: Հենց այս միջանկյալ մեկնությունը նկատի առնելով էլ Կոր-

37 Սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք, յառաջաբանով, համեմատութեամբ եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Էջմիածին, 1894 «Եւ իրաւանց արդարութեան երկու բարբառ են, որ յարգեն եւ պատուեն զիրաւախորհսն աւետեօք եւ պարգեւօք, եւ սպառնալեօք եւ պէսպէս նեղութեամբք պատժեն զապախաւորսն եւ զանիրաւսն» (ճառ Ը, էջ 89). «Եւ ետ (Աստուած) անձնիշխան եւ ազատ կամաց արարածոց երկուս դաստիարակս, իբրեւ որդւոյ (ուզուում եմ՝ որդւոց), սպառնալիս եւ աւետիս (ճառ Բ, էջ 101). «Եւ ետ (Աստուած) դաստիարակս երկուս զաւետիս եւ զսպառնալիսն» (ճառ ԺԸ, էջ 198): Հմմտ. նաեւ եղիչ է «եւ ոչ յիշեաց (Վասակ) զքարոզութիւն սուրբ աւետարանին. եւ ոչ ի սպառնալեացն զանգիտեաց, եւ ոչ յաւետիսն մխիթարեցաւ» («Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին». Ի լոյս ածեալ բազմատուրթեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան. Երևան, 1957, էջ 91):

յունն առաջին անգամ հայացված համառոտ Աստվածաշնչի, իր խոսքով՝ նորագյուտ Վարդապետության թարգմանիչներ է համարում Մաշտոցին և Սահակ կաթողիկոսին:

Ս. Գրիգորի Վարդապետությունը իր ժամանակին, ինչպես և այսօր, եղել և մնում է այն բացառիկ ամփոփ Աստվածաշունչը, որը Հին կտակարանի աշխարհաստեղծման և արարչագործության այլ դրվագներում, ինչպես և մարգարեական վկայություններում հետևողաբար ներմուծում է Նոր կտակարանի գլխավոր գաղափարը՝ աստվածային սուրբ երրորդությունն իր երեք անձերով՝ եբրայական միաստված արարչի փոխարեն<sup>38</sup>: Ըստ Վարդապետության, բոլոր սկիզբներից առաջ էր տեր Աստված և նրանից ծնյալ միածին Որդին և Սուրբ Հոգին՝ նրա էությունից: Ոչ թե միայնակ Տեր Աստված, այլ միասնական երրորդությունն է, որ ամենագոր կամքով և միախոհ, միակամ, միաբուն ինքնությունը արարեց աշխարհը, երկինք և երկիր. երկինքը կախեց ոչնչից և երկիրը դրեց ոչնչի վրա (Ագաթ. §259): Վարդապետության մեջ արարիչ Հայրը միշտ և շարունակ խորհուրդ է առնում արարչակից Որդու և համագործ Հոգու հետ, որ շրջում էր ջրերի վրա (Ագաթ. §260). «Եւ անդէն իսկ ընդ ասելն Հօրն արարչութեան ցարարչակից Որդին եւ զհամագործ Հոգին որ ի վերայ ջուրցն շրջէր, անդ ի ներքոյ ջուրցն հրամայեաց լինել կազմածոյն յօրինուածոց արարածոց: Ասացեալ ի Հօրէ առ խորհրդակալսն, խորհրդակաարսն համագործոն՝ լինել լոյս, եւ անդէն եղեալ լոյսն համասփիւռ՝ խաւարակուլ օրաբեր <...> Եվ յետ այսորիկ ասացեալ միասնական երրորդութեանն զօրութեան՝ լինել լուսաւորացդ առ ի ջրեղէն խորանանման հաստատութեան երկնին...»<sup>39</sup> Այսպես միածին Որդին և Սուրբ Հոգին մասնակից են արարիչ Հոր բոլոր արարումներին և նրա հետ միասին ստեղծում են հրեշտակներին՝ հոգեղեն և հրեղեն, իսկ մարդուն՝ հողից (Ագաթ. §262-263), կնոջը՝ Ագամի կողից (Ագաթ. §275): Սուրբ երրորդության երեք անձինք են կործանում երկնաբերձ աշտարակը, միալեզու ազգը դարձնում բազմալեզու և բաժանված ազգերին սփռում երկրի երեսին (Ագաթ. §622):

Վարդապետությունը տալիս է և մարդկային ցեղի ճյուղագրությունը՝ Ագամից մինչև Նոյ, ապա եւ Արրահամից մինչև Մովսեսի մահը (Ագաթ. §277-315):

Այսուհանդերձ Վարդապետությունը Հին և Նոր կտակարանների սխեմատիկ համառոտումը չէ, այլ որոշակի ծրագրով համակարգված հավատամատյան: Դրա համար էլ Ագաթանդեղոսն ասում է, թե երանելի Գրիգորիոսը (Մաշտոցը) «Վարդեալս եւ յարմարեալս ընծայեցուցանէր զամենայն ասացեալ զպատգամսն Հոգւոյն սրբոյ» (§724): Եվ իրօք, Վարդապե-

38 Ս. Գրիգորի Վարդապետության անգլերենի թարգմանիչ և մեկնաբան Ռոբերտ Թոմսոնի կարծիքով, Վարդապետության մեջ գլխավոր թեման Հին կտակարանի իրացումն է Նորի մեջ (The Teaching of Saint Gregory, an Early Armenian Catechism, translation and commentary by Robert W. Thomson. Harvard University press, Cambridge, Massachusetts, 1970, p. 67, 339, note 1): Այս տեսակետը խիստ միակողմանի է և իրավացի է միայն այն դեպքում, երբ Վարդապետությունը փորձում է Նոր կտակարանի իրողությունները հաստատել Հին մարգարեների կանխասացություններով:

39 Հմմտ. Ծննդ. (Ա, 3-4). «Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս: Եւ եղև լոյս»: Ա.14 «Եւ ասաց Աստուած. Եղիցին լուսաւորք ի հաստատութեան երկնից, ի լուսաւորութիւն ի վերայ երկրի»:



տուլթյան քննութիւնը ցույց է տալիս, որ այն բաղկացած է երեք բաժնից՝ Սուրբ Երրորդութեան անձերի թվով, որ կարելի էր վերնագրել այսպես՝ 1) Հայր Աստուած Արարիչ (Ագաթ. §259–338), 2) Որդի Աստծո և Որդի մարդո (Ագաթ. §339–496), 3) Սուրբ Հոգի, մխիթարիչ և բարեխոս (Ագաթ. §497–714): 298-360 պարբերութիւններում ի մի են բերված Հին կաակարանից բազմաթիվ դրվագներ, որ ցույց են տալիս Աստծո մարդակերպ կամ հրեշտականման երևումը մարդկանց<sup>40</sup>: Այնուհետև հաջորդում են Աստվածորդու առաջիկա մարդեղացման հանգամանքները (Ագաթ. §361-390) և նրա երկրորդ ծնունդը Սուրբ Կույսից՝ մարգարեների կանխասացութիւններով հանդերձ, Հիսուսի երկրավոր կյանքը մինչև խաչվելն ու համբարձումը (§391-496), Սուրբ Հոգու դալուստը և զրա մեկնութիւնը (§497-509, 660-679), առաքյալների քարոզը և սփռումը (§680-701), վկայութիւններ առաքելական թղթերից՝ Քրիստոսի աստվածութեան և երկրորդ գալստյան մասին (§700-714)<sup>41</sup>:

Բազում են համարձակ նորամուծութիւնները ս. Գրիգորի Վարդապետութեան մեջ, շատ ծածուկ խորհուրդներ են բացահայտվում դրանց քրիստոսաբանական-դավանական ստորոգութիւններում: Այսպես՝

Ա. §626-ում Վարդապետութեան հեղինակը մեջ է բերում Քրիստոսի երկու պատվիրանները, ակնհայտորեն ըստ Մատթեոսի Ավետարանի (ԻԲ, 40, 37, 39). «այս երկու պատուիրանս ամենայն օրէնք եւ մարգարէք կախեալ կան: Նախ՝ սիրել զԱստուածութիւնն յամենայն սրտէ եւ յամենայն անձնէ եւ ամենայն զօրութեամբ հանդերձ, որ է առաջինն: Եւ երկրորդն՝ սիրել զընկերն իբրեւ զանձն» (տե՛ս Մարկ. ԺԲ 29-31): Եվ անսպասելի ավելացնում է իր կողմից ևս մի երրորդ պատվիրան. «Լսել Աստուածութեան բանին աւետեաց առանց երկմտութեան եւ հաւատալ այսմիկ»<sup>42</sup>: Ակնհայտ է, որ Քրիստոսի երկու պատվիրաններին երրորդը ավելացնելու համար պետք է որ Վարդապետութեան հեղինակը իսկապես հայ եկեղեցու համար շատ հեղինակավոր և ազդեցիկ անձ լիներ:

Բ. Ահավասիկ ևս մի շեղում Ավետարանից՝ ըստ Մատթեոսի (ԺԶ, 19), Հիսուս միայն Պետրոս առաքյալին է շնորհում երկնքի արքայութեան բանալիները՝ «Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանդամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»: Ասկայն Վարդապետութիւնը զանց անելով Մատթեոսի այս վկայութիւնը, հաստատում է, որ Քրիստոս ոչ միայն

40 «Ձշմարտադոյն համարիցիմք այսուհետեւ զհոգեկան ազգին զամենայն մարդակերպ նմանութիւնս առ մարդիկ եղեալ՝ առ ի պատգամաւորութիւն սպասավորութեան հրամանացն Աստուծոյ» (324) – բոլոր ձեռագրերն այստեղ ունեն եղեալ, ուղղում ենք յղեալ, ինչպես հուշում է հաջորդող առ ի պատգամաւորութիւն կապակցութիւնը: Հմմտ. «նոյնպէս եւ հրեշտակքն պատգամաւորեալք առ ազգս մարդկան» (351):

41 Ա. Գրիգորի Վարդապետութեան մի ամբողջ բաժին, որ պատմում է Աստվածորդու էութեան և Սուրբ Կույսից մարմին առնելու մասին (368-405, փոքր ընդհատումներով)՝ զետեղված է VII դ. սկզբին Կոնստանդնուպոլիսի կաթողիկոսի կազմած «Կնիք Հաւատոյ» ժողովածուի մեջ (հրատ. Կարապետ Տէր-Մկրտչեան. Էջմիածին, 1914, էջ 116-156):

42 Հավանորեն, ըստ եբր. (Ժ, 36, 39) «զկամս Աստուծոյ արարեալ հասլիք աւետեացն. բայց մեք ոչ եթէ երկմտութեամբ եմք ի կորուստ այլ հաւատքով ի փրկութիւն հոգևոց»: Հմմտ. նաև Ագաթ. §857 «Անխորշ եւ անխէթ աստուածահրաման պատուիրանացն Հնադանդեսցին առանց երկմտութեան, եւ արարչութեանս հաւատալ յամենայն սրտէ»: Բ. Թոմասնի բացատրութիւնը երեք պատվիրանների մասին բավարար չէ. տե՛ս «The Teaching» p. 154, 626, note 1.

Պետրոսին, այլ բոլոր առաքյալներին հանձնեց երկնքի արքայության բանալիները (§468). «Եւ (Տէր) զփականս արքայութեանն ես ի ձեռս նոցա (առաքելոցն)»: Ստացվում է լուրջ հակասություն Մատթեոսի ԺԶ 19 վկայության և Վարդապետության §468-ի միջև<sup>43</sup>: Թե ի՞նչ հիման վրա է վաղ հայկական լուսավորչական ավանդույթը Պետրոս առաքյալի լայն ճանաչում գտած մենաշնորհը վերագրում բոլոր առաքյալներին, այդ մասին Վարդապետությունը ոչ մի բացատրություն չի տալիս, և այստեղ բերում ենք զուտ մեր նկատառումները: Նույն Մատթեոսի Ավետարանում, ավելի ուշ, Հիսուս ասում է աշակերտներին (ԺԸ, 18). «Ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի՝ յեղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»: Թվում է, թե Վարդապետությունը հիմք է ընդունել հենց Հիսուսի այս վերջին խոսքը, որով փաստորեն ժխտվում է Մատթեոսի նախորդ վկայությունը (ԺԶ, 19) և երկնքի արքայության բանալիները շնորհվում են ոչ թե միայն Պետրոսին, այլ հավասարապես բոլոր առաքյալներին: Եվ այս հավասարապաշտության գիծը գառնում է լուսավորչական հավատի վաղ հաստատված հիմունքներից մեկը: Ավելին՝ Հետագայում, Կեսարիայում եպիսկոպոս ձեռնադրվելիս ինքը՝ Գրիգոր Լուսավորչը ևս բոլոր առաքյալների նման պետք է իշխանություն ստանա երկնքում և երկրում. «առնուլ զփականս արքայութեանն երկնից, կապել եւ լուծանել յերկրի» (Ագաթ. §805): Այս մեկնարանությունը չի մնացել սոսկ Վարդապետության էջերում, այլ պաշտոնապես ընդունվել է հայ եկեղեցու կողմից և քարոզվել առաքյալներին նվիրված հնագույն շարականներում: Այսպես, «Երանելի սուրբ առաքեալք» շարականում (կանոն համօրէն առաքելոցն, օրհնութիւն Գ ձայն), որ վերագրվում է Հովհան Մանդակունի կաթողիկոսին (478-490 թթ.), կարդում ենք (II տուն). «Որք առիք իշխանութիւն ի վերայ ազգի մարդկանց կապել եւ արձակել ի յերկինս եւ ի յերկրի, արձակեցէք ըզմեզ ի կապանաց մեղաց մերոց»<sup>44</sup>: Իսկ Ներսես Շնորհալին (կաթողիկոս՝ 1166-1173 թթ.) «եօթանասուն եւ երկու աշակերտացն Քրիստոսի» կանոնում գրում է. «որ տիրականդ իշխանութեան հաղորդս արարեր զսուրբ առաքեալսն կապել եւ արձակել զորդիս մարդկան յերկինս եւ յերկրի եւ աթոռակից լինել քեզ խոստացար»<sup>45</sup>:

Գ. Նոր կտակարանում ո՛չ Մատթեոսի (Ե, 1-12), ո՛չ Ղուկասու (Զ, 12, 17) Ավետարաններում չի հիշատակված այն լեռան անունը, որտեղ Հիսուս տվեց իր լեռան քարոզը և երանությունները: Ըստ հնագույն ավանդության՝ վկայված Ս. Գրքի լատին թարգմանիչ Հիերոնիմոսի մի թղթում, Երանությունը լեռը (*Mons beatitudinum*) նույնացվում է Կարուն-Հաթթին բար-

43 Ռ. Թոմսոնը (*The Teaching*, p. 106, § 468, note 3) չի մեկնաբանել այս հակասությունը և միայն նշում է, թե «Օրիգենեսը (հայացված ձևով՝ Որոգինես -185-254 թթ.) մերժում է Մատթ. ԺԶ 19-ի այսօրինակ մեկնությունը և պնդում, որ միայն Պետրոսն է ստացել բանալիները»: Թեև Վարդապետությունը ևս ընդունում է Պետրոս առաքյալի առաջնությունը («որոց առաջինն Պետրոս» §467, հմտ. *Petros o Prvosiat... tyn apostogvn - Cyril Jer., Cat., Xi 3, Migne Patrol. Grace., t.33*), բայց Ագաթանգեղոսի Պատմության հեղինակը հատկապես ընդգծում է Պողոս առաքյալի դերը անվանելով «Մեծ առաքյալ» (§231) և «յառաջադէմն Պաւղոս բովանդակ առաքելական գնդաւն» (§854):

44 Ձայնքաղ շարական. Կոստանդնուպոլիս, 1852, էջ 75:

45 Նույն անդում, էջ 72:

ձունքի հետ<sup>46</sup>: Այդ անունն են ընդունում թե՛ անցյալ դարի նշանավոր եվրոպացի աստվածաբան Կասպարին և թե՛ մեր Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը<sup>47</sup>: Եվ միայն Ագաթանգեղոսի Պատմությունն է (§850), որ թարգմանական է կոչում այն լեռը, որի վրա Հիսուս տվեց ավետյաց երանությունները: Ավետարանում բացակայող տեղանունը ստուգիվ հավաստելու համար Ագաթանգեղոսի պատմության հեղինակը պատշաճ համբավ և հեղինակություն վայելող անձնավորություն պիտի լիներ, մանավանդ որ հեղինակները՝ հայտնի եկեղեցական հայրերը, համերաշխ չէին այս հարցում:

Դ. Հարկ է մի անգամ ևս ընդգծել այն բացառիկ խորաթափանցությունը, որով Վարդապետությունը մեկնում է (այդ մասին արդեն խոսք եղավ սկզբում) կրակի լեզուների ձևով Սուրբ Հոգու իջման հրաշքը և դրանից ելնելով՝ հենց Հիսուսի վերջին պատվիրանը, որ նա համբարձվելուց առաջ տվեց առաքյալներին: Ըստ Գրիգոր Լուսավորչի ուսմունքի՝ Հիսուսի այդ վերջին պատվիրանի իմաստը ոչ թե Ավետարանը սոսկ բոլոր ազգերին քարոզելն է, այլ բոլոր լեզուներով քարոզելը. «Ելէ՛ք ընդ ամենայն աշխարհս, եւ աշակերտեցէ՛ք զամենայն լեզուս» (Ագաթ. § 661): Եվ հենց այդ հիման վրա էլ հասկանալի է դառնում, թե ինչու Աստվածաշնչի թարգմանության գաղափարն այդպիսի մեծ ազդակ հանդիսացավ հայ ազգային լեզվի աննախադեպ բուռն զարգացման և, ամենից առաջ, հենց հայ գրերի ստեղծման համար: Վարդապետության այս դրույթով էլ գործում էր Մաշտոցը Վիրքում և Աղվանքում՝ նրանց համար այբուբեն ստեղծելով և Աստվածաշունչը թարգմանել տալով վրացերեն և աղվաներեն: Հակառակ սրան ասորի և հույն կղերը IV դարում քրիստոնեություն էր տարածում Հայաստանի գավառներում՝ համառոտն հայերին անհասկանալի լեզուներով):

Ե. ս. Գրիգորի Վարդապետությունն այսօր էլ, իր ստեղծման 1600-ամյա հեռավորությունից, սատարում է լուսավորչական հավատքին: Այժմ, Եհովայի վկաները, մեր դռները բախելով համատարած ավերից շվարած, անտերությունից տարակուսած, քաղցից մոլորված մեր հայրենակիցներին զարմացնում են, թե «մինչև հիմա պաշտել եք ու չեք իմացել, որ Աստծո անունը Եհովա է եղել», այնինչ գեո 1600 տարի առաջ Վարդապետությունն անգրագրաբան էր այս հարցին և սրամիտ պատասխան տվել՝ չկա մեկը, որ իմանար Աստծու անունը, որովհետև եթե Աստված անուն ունենար, կնշանակի եղել է մեկը Աստծուց առաջ, որ նրան անուն է տվել. «Եւ զա-

46 C h. E d. C a s p a r i. Chronologisch - geographische Einleitung in das Leben Jesu Christi. Hamburg, 1869, S. 125-127: Թոմասը Երանությանց լեռան անվան մասին որևէ տեղեկություն չի տալիս. տե՛ս A g a t h a n g e l o s. History of the Armenians. Translation and Commentary by R. W. Thomson, Albany State University of New York Press, 1976, p. 385, 496, §850.

47 Մ. Օրմանյան. Համապատում. Կ. Պոլիս, 1911, էջ 143. «(Յիսուս) Մովեզերքին ամբոխէն և ժիւրէն հեռացաւ և Կափառնաուսի լեռը ելաւ, քաղաքէն երեք ժամի չափ (ըստ Կասպարիի՝ Կափառնաուսից մոտ մեկուկես ժամ, էջ 126- Ա.Մ.) հեռու երկու գագաթներու բաժանուած և մեջտեղը ընդարձակ տափարակ ունեցող լեռ մը, զոր Քրիստոնեայք Երանութեանց Լեռ կանուանեն, և տեղացիք ճէպէլ Քորուն-Հաթթին անունով կը կոչեն»:



նուն նորա (Աստուծոյ) ոչ ոք գիտաց. զի չէ ևս անդր քան զնա ոք՝ որ անտի և այսր անուանիցէ» (Ագաթ. §358):

Այս ուրույն մեկնաբանութիւնները դալիս են Հաստատելու, որ Հայ դպրութեան արշալույսին Ագաթանգեղոսի Պատմութեան և մասնավորապէս Լուսավորչի Վարդապետութեան նման գլուխգործոցը կարող էր կյանքի կոչվել միայն Հայ եկեղեցու և ազգի Համար բացառիկ հեղինակութիւն ունեցող ազգեցիկ անձանց ջանքով: Վարդապետութիւնը Լուսավորչի գրվածքը չէ, ինչպէս երբեմն թյուրիմացաբար կարծում են, այլ ձեռնարկ Լուսավորչի ուսմունքի մասին՝ ստեղծված Մեսրոպ Մաշտոցի, մասամբ էլ Սահակ Պարթևի ձեռքով: Ամենահավաստի թվացող վկայութիւնը, որով Վարդապետութիւնը վերագրվում է ս. Գրիգորի գրչին, եզրափակիչ հիշատակարանն է (Ագաթ. §715). «Կատարեցաւ վարդապետութիւն սրբոյն Գրիգորի, որ շնորհեցաւ նմա յԱստուծոյ [...] փառաւորել զսուրբ անուանսն Հօր եւ Որդոյն և Հոգւոյն սրբոյ»: Սակայն այս ամբողջ պարբերութիւնը բացակայում է մինչև XII դ. վերջը եղած Ագաթանգեղոսի Պատմութեան մայր օրինակներում և հիմնական գրչագրերում և հետագայում է մուծվել մի ձեռագրի մեջ<sup>48</sup>:

#### ОБСТОЯТЕЛЬСТВА ПЕРЕВОДА СВЯТОГО ПИСАНИЯ НА АРМЯНСКИЙ ЯЗЫК И КРАТКАЯ БИБЛИЯ МЕСРОПА МАШТОЦА

АЛЬБЕРТ МУШЕГЯН

#### Р е з ю м е

На основании одного высказывания Корюна из "Жития Маштоца" в арменоведении долгое время бытует мнение, что сразу же после создания армянских письмен в 405 г. Сааком Партевом и Месропом Маштоцем были полностью переведены на армянский язык Ветхий и Новый заветы. Однако исследователи не обратили внимания на то, что непосредственно за отрывком, где Корюн бегло упоминает о переводе Библии, в "Житии Маштоца" следует продолжение (отрывок 11-й), из которого становится очевидным, что предполагаемый перевод был осуществлен еще до испробования армянских письмен на практике. Такое представляется невозможным. На основании сопоставления и нового толкования сведений Корюна и Хоренаци автор приходит к заключению, что первое замечание Корюна о переводе Святого писания в действительности касается только лишь создания краткого изложения Библии. Такое заключение полностью совпадает с сообщением Мовсеса Хоренаци (История Армении, книга 3-я, гл. 53) о том, что Месроп во время пребывания в Сирии наряду с созданием армянских письмен кратко изложил на армянском языке двадцать две канонические книги Ветхого завета и Новый завет. В частности, в качестве образца краткого изложения четырех Евангелий мог бы служить для Маштоца сирийский Диатессарон, которым пользовались в то время в Эдессе, Нисибисе

<sup>48</sup> Ագաթանգեղոսի Պատմութեան 1909 թ. քննական հրատարակութեան հեղինակները ևս ամբողջ §715-ը համարում են հետին հավելված (էջ 372, տողատակում):

и в близлежащих местностях. Краткая Библия Маштоца в дальнейшем была дополнена Сааком католикосом и включена в написанную им "Историю Агафангела" под названием "Учение святого Григория". О полном же переводе Библии Корян и Хоренаци свидетельствуют позже, и оба приписывают его только Сааку католикосу, завершившему перевод Библии с греческого оригинала в 420-х годах.

#### THE CIRCUMSTANCES OF THE TRANSLATION OF THE BIBLE INTO ARMENIAN AND THE BRIEF BIBLE OF MESROP MASHTOTS

*ALBERT MOUSHEGHIYAN*

#### S u m m a r y

There is an opinion in Armenology, based on a notion of Koryun from "The Life of Mashtots", that after the invention of the Armenian alphabet in 405 A. D. Sahak Partev and Mesrop Mashtots, at once, translated the Old and the New Testaments. But researchers didn't pay attention to the fact, that after mentioning about the Bible's translation in "The Life of Mashtots" follows a sentence (extract 11) which makes clear that the supposed translation had been made even before testing Armenian letters in practice. Such an assumption seems incredible. The author comes to another conclusion on the basis of a new interpretation of the data from the works of Koryun and Movses Khorenatsi (5th century): the first notion of Koryun about the Bible's translation concerns only the brief narration of the Bible. Such a conclusion wholly coincides with Movses Khorenatsi's notion ("History of Armenia", book III, chapter 53) according to which while being in Syria Mesrop Mashtots together with invention of the Armenian alphabet briefly narrated 22 canonic books of the Old Testament and the New Testament. Particularly, as a short sample of the four Gospels' narration could serve the Syriac Diatessaron, which at that time was in use in Edessa, Nisibis and neighbouring lands. Then the brief Bible of Mashtots was completed by Catholicos Sahak and included in "The History of Agathangehos" under the title of "The Teaching of St. Grigor". Later Koryun and Movses Khorenatsi testify about the complete translation of the Bible and both ascribe it only to Catholicos Sahak who finished the translation of the Bible from the Greek in the 420s.